ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

Մոտիվացիոն հարթակ
«Հայ գործարարների գրքեր՝ Նոր Հայաստանին» խորագրով
28 նոյեմբերի, 2019թ., ժամը 14:30

Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնը կազմակերպում է ձեռներեցության մոտիվացիոն հարթակ «Հայ գործարարների գրքեր՝Նոր Հայաստանին» խորագրով, որը միտված է աջակցելու ձեռնարկատիրական ներուժի և մշակույթի զարգացմանը Նոր Հայաստանում:

Հրավիրված են մոտիվացիոն գրքերի հեղինակներ, գործարարներ, ովքեր կներկայացնեն իրենց գրքերի ստեղծման նախապատմությունը, արդյունավետ բիզնես սկսելու սկզբունքները և հետագա զարգացման մարքեթինգային գործիքները, ինչպես նաև կկիսվեն սեփական բիզնես հիմնելու, հաջողություններ գրանցելու իրենց փորձով, հմտություններով ու գիտելիքներով, գրքի շնորհանդեսի ձևաչափով:

Միջոցառումը հնարավորություն կընձեռի ձեռնարկատերերին, փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ներկայացնող ստարտափերին, հետաքրքիր բիզնես գաղափար կրողներին հարցեր ուղղել հեղինակներին, ստանալ տեղեկատվություն սեփական ձեռնարկատիրական միտքը զարգացնելու համար, ինչպես նաև ձեռք բերել մոտիվացիոն գրքեր և հավատալ սեփական հաջողությանը:

Միջոցառումը նախատեսված է ուսանողների, դասախոսների, ձեռներեցների, գործարարների, ստարտափ հիմնել ցանկացողների, մարքեթոլոգների, բիզնեսի ոլորտի ընկերությունների, պետական կառույցների, միջազգային, հասարակական կազմակերպությունների և գործարար աշխարհի այլ ներկայացուցիչների համար:

Միջոցառման հյուրերն են՝

- **«Չոր մարքեթինգ» գրքի** և կուրսի հեղինակ, գործարար, «Մանթաշով» գործարարների միության համահիմնադիր Վահրամ Միրաքյանը:

  Թեմա՝
  - ✓ Արդյունավետ բիզնես սկսելու նախապայմաններ, զարգացման մարքեթինգային գործիքներ՝ մանրամասն նկարագրություններով, դրական և բացասական կողմերի ներկայացումով, որոնք ընտրված են հայկական շուկայում արդյունավետ լինելու սկզբունքով:
  - ✓ Նորաստեղծ «Մանթաշով» գործարարների միության նպատակներն ու խնդիրները:
- **«Կհանդիպենք բարձունքում» մոտիվացնող գրքի հեղինակ, գործարար, Սամվել Աղաջանյանը**:

  Թեմա՝
  - ✓ Նոր ռազմավարություններ, որոնք կօգնեն ավելի արագ լուծել խնդիրները բարդ իրավիճակներում, հաջող բիզնես ստեղծել, առաջ շարժվել ու հասնել հաջողությունների:

- ✓ Հանրահայտ ու հաջողակ մարդկանց օրինակներ, թե ինչպես է հնարավոր հասնել ձգտումներին ու նպատակներին՝ չկրկնելով այլոց սխալներն ու բացթողումները, քանզի հաջողակ մարդիկ կատարյալ չեն:

❖ **«Էդիթ Պրինտ» հրատարակչության մարքեթինգի տնօրեն Շավարշ Կարապետյանը** կներկայացնի հրատարակչության նախաձեռնությամբ հայերեն թարգմանված և հրատարակված, սերունդների համար ուսանելի հայ ականավոր մարդկանց մասին պատմող նոր գրքեր՝

- ✓ *Աշխարհահռչակ գործարար և բարեգործ Գալուստ Գյուլբենկյանի մասին պատմող Ջոնաթան Քոնլիի* ***«Պարոն հինգ տոկոս» գիրքը*** *(հայերեն և ռուսերեն):*
- ✓ *Ամերիկահայ գործարար, միլիարդատեր, բարերար, Հայաստանի ազգային հերոս Քրրք Քրրքորյանի մասին պատմող Ուիլյամ Չ. Ռեմփելնի* ***«Խաղացողը» գիրքը****:*
- ✓ *Ամերիկահայ գործարար, Reddit կայքի և Initialized Capital վենչուրային ընկերության համահիմնադիր* ***Ալեքսիս Օհանյանի «Առանց թույլտվության» գիրքը:***

Ներկաների համար կգործի ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանի ձեռնարկատիրությանը առնչվող գրականության թեմատիկ ցուցահանդես:

Միջոցառումը տեղի կունենա «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում, հասցե՝ք. Երևան, Կոմիտասի 49/3, խորհրդակցությունների դահլիճ, 2-րդ հարկ, կայքէջ՝ http://www.innovcentre.am/hy/, ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/InnovCentre

Մուտքը ազատ է:

Խնդրում ենք մասնակցությունը հաստատելու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ adasarg@innovcentre.am էլ. փոստի հասցեին կամ զանգահարել 011-238747 հեռախոսահամարով, գրանցվել մեր *ֆեյսբուքյան էջում*: